# ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

*Քաղաքային «Կումայրի» թերթի հավելված*

1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ, № 44, ԳԻՆԸ՝ 50 ԿՈՊ.



### ՅՈՒՐԱՔ ԳԻՇԵՐԻՆ ՆԱԽՈՐԴՈՂ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ

Հնչում է այս համաշխարհային խավարում
Մի վիթխարի ցավ համաշխարհային.
Հոգևոր նինջը պետք է հաղթահարվի,—
Դրա համար է ցնցվում ու ցավում սիրտը մարդկային:

Քո գործը իմ մեղքը կդառնա,
Եթե ես արթուն չեմ իմ շնչում
Եվ մտքեր չեմ վարժում,
Որոնք նաև Քո շահն են:

Ուստի գիտցիր, որ մահվան տանջանքները,
Որոնք ցնցում են ողջ մարդկությունն հիմա,
Ոչ այլ ինչ են, քան ճակատագրի հարցեր՝
Մարդկանց խոր քնից հանելու համար.

Ճակատագիրն այժմ կանչում է բոլոր շնչերին,—
Արդյոք լի են նրանք լինելության նպատակով
Եվ կարող են արդյոք կրել տանջանքներ,
Որոնք խաղաղվում են սոսկ Փրկիչի սիրով:

ՌՈՒԴՈԼՖ ՇՏԱՅՆԵՐ

Լուս. Հովհաննես Արմենակյանի

Մայր Թերեզա

## ԱՐՄԱՆԴ ՀԱՄԵՐ.

## ՑՆՑՎԱԾ ԵՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՑ

Խորապես ցնցված եմ այն ողբերգությունից, որը հայ ժողովրդին պատճառեց աննախադեպ ուժի տարերային աղետը, հայտարարեց ամերիկացի ականավոր հասարակական գործիչ, «Օքսիդենթալ փետրոլեում քորպորեյշնի» պրեզիդենտ Արմանդ Համերը: Լենինականում տեսա երկրաշարժի ահավոր հետևանքները, լրիվին ավերված բնակելի շենքերը, ուսումնական ու բժշկական հաստատությունները, տեսա անօթևան մնացած հազարհազարավոր կանանց, երեխաների, ծերամարդկանց: Մեր սրտերը սարսում են ցավից, վշտից ու սգից:

Թշվառ մարդկանց վիճակը գեթ ինչ-որ կերպ թեթևացնելու համար մեկ միլիոն դոլարի չեկ հանձնեցի Հայկական ԽՍՀ կառավարության ղեկավար Ֆ. Սարգսյանին: Այցելեցի Երևանի հիվանդանոց, որտեղ բուժվում են վիրավոր մարդիկ: Ուրախ եմ, որ հիվանդներին օգնություն կլինեն այն բժշկական պատրաստուկներն ու դեղորայքը, որ մենք բերել ենք Հայաստան:

Ես պատրաստ եմ այսուհետև էլ լինել ձեր կողքին: Հայաստանի գլխավոր վիրաբույժ պրոֆեսոր Հովհաննես Սարուխանյանի հետ զրուցելիս խնդրեցի ինձ հայտնել, թե ձեզ ինչ է հարկավոր: Վստահ եղեք, որ կանհըրաժեշտ ամեն ինչ կուղարկենք: Դժբախտությունը համախմբում, միավորում է մարդկանց, նպաստում տարբեր ժողովուրդների փոխըմբռնման ամրապնդմանը, ընդգծեց նա:

Դոկտոր Ա. Համերը զրույց ունեցավ Հայկական ԽՍՀ արտաքին գործերի մինիստր Ա. Ա. Մկրտչյանի հետ:

Ուղևորության ընթացքում նրան ուղեկցում էին ընկերության փոխպրեզիդենտներ Ռիչարդ Ռ. Ջեկոբսոնը և Ֆրենկ Աշլին, ինչպես նաև բժշկության դոկտոր, պրոֆեսոր Ռոզա-Մարիա Դուրագոն: (ԱՐՄԵՆՊՐԵՍ)

### ՂԱԶԱԽՍՏԱՆԻՑ

Դեկտեմբերի 14-ին Երևան ժամանեցին Ղազախական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի երկրաշարժաբանության ինստիտուտի մի խումբ մասնագետներ՝ հանրապետությունում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքները համատեղ ուսումնասիրելու համար: Նրանք եկել են իրենց փոխադրամիջոցով և անհրաժեշտ սարքավորումներով: Ինչպես Արմենպրեսի թղթակցին հաղորդեցին հանրապետության գիտությունների ակադեմիայի շտաբում, ներկայումս «սպիտակյան» երկրաշարժի կենտրոնի գոտում ծավալվել է 15 երկրաշարժաբանական կայան, որոնք գիշերցերեկ հետևում են ցնցման գլխավոր օջախի «վարքագծին»: Հայ, մոսկվացի, վրացի և ուզբեկ երկրաշարժաբանների ձեռնարկած համատեղ աշխատանքին կմիանան նաև Ղազախստանի մասնագետները, որոնք Միջին Ասիայի ուժեղ երկրաշարժերի ժամանակ մեծ փորձ են կուտակել և կարողանում են հաջողությամբ աշխատել բարդ, ծայրագույն դաշտային պայմաններում:

(Արմենպրես)



Գուլպայի ֆաբրիկան



Փրկարարը

Լուսանկարները՝ Հմ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ





ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի համաքաղաքացիներ, ուրբաթ օրերին լույս է տեսնում «Կումայրի» թերթի «Հիշողություն» հավելվածը, հրատապ մահազդերը՝ (հուղարկավորություններ, ցավակցություններ) այսուհետև կտպագրվեն նաև «Հիշողություն» հավելվածում:

Հրաչ, Ֆելիքս, Մելսիդա, Կիմա, Էդիկ, Սեդա, Սիլվա, Կարեն, Հրաչիկ Խաչատրյանները, Մարտուն, Եվգենիա, Լենդրուշ Հարությունյանները, Մկրտիչ, Արմեն, Նաիրա Տեր-Մկրտչյանները, Բենիամին, Գևորգ, Գնել, Վահրամ Ստեփանյանները խոր վշտով հայտնում են հարազատներին և բարեկամներին, կնոջ, քրոջ, մոր, սկեսրոջ, զոքանչի, տատի, սիրելի

ՄԱՐԳՈ ԹԱԴԵՎՈՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

մահը: Հուղարկավորությունը՝ սեպտեմբերի 22-ին, ժամը 16-ին, Կիրովի փողոցի № 2 շենքից:

Տոնիկ Հովհաննիսյանը և Հրաչ Աղեկյանը իրենց ընտանիքներով խորապես ցավակցում են Խաչատրյանների ընտանիքին, նրանց սիրելի

ՄԱՐԳՈ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

մահվան առթիվ:

Լուսանկարը՝ Հմ. Կարապետյանի

«ԿՈՒՄԱՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ
ՊԱՏՎԵՐ № 2825 ԿՈՒՄԱՅՐԻԻ ՏՊԱՐԱՆ